

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 29

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎԱՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Հունանյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Ս. Շուխյանը, Վ. Մկրտչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Անշարժ գույքի նվիրաբերության 21.08.2013թ. ՍՄ 2709 պայմանագիրը լուծելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

5. 02-001-0410-0110 ծածկագրով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

6. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

8. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված և որպես պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**/1/ Օրակարգը հաստատվել է 9 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը: Վերջինս թվային արտահայտությամբ ներկայացրեց բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը և առաջարկեց ի գիտություն ընդունել այն:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի տարածքում գտնվող որոշ գույքերի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Անշարժ գույքի նվիրաբերության 21.08.2013թ. ՍՄ 2709 պայմանագիրը լուծելու մասին

Զեկուցումով հանդես եկավ քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ լուծելու Աշտարակի քաղաքապետարանի և <Սիրիրահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոն> հասարակական կազմակերպության միջև 21.08.2013թ. կնքված ՍՄ 2709 նվիրաբերության պայմանագիրը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - 02-001-0410-0110 ծածկագրով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 02-001-0410-0110 ծածկագրով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և գործառնական նշանակությունը փոփոխելուց հետո աճուրդ-վաճառքով այն օտարելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Կ. Շահագիզյանը, որոնց տվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման փոխելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Բ. Վարդանյանը: Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, կառուցապատման իրավունքով քաղաքացիներին տրամադրելու:

Զեկուցողը նշեց, որ հարցն, ըստ էության, բաղկացած է երկու մասից՝ առաջինը վերաբերվում է նրան, որ որոշ քաղաքացիներ դիմում են ներկայացրել և հաշվի առնելով, որ հողատարածքները չեն գերազանցում 20քմ, ուստի նրանց հետ պայմանագիր է կնքվելու առանց մրցույթի, իսկ մնացած հողատարածքների տրամադրումը կատարվելու է մրցութային կարգով:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված և որպես պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Զեկուցողը նշեց, որ նախկինում սխալ քարտեզագրման արդյունքում նշված հողատարածքները հաշվառվել են անհայտ քաղաքացու սեփականություն, սակայն դրանք իրականում հանդիսանում են համայնքային սեփականություն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Կ. Շահազիզյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 9 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասերը, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի օգոստոսի 22-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

**ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**

**ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**

**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ**

**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏԶՅԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**